

**ԲԵՐՔԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

ՀՀ Արագածոտնի մարզի «Բերքառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
 2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:
- Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
 2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
 3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
 4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը),
 5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. սեպտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի հանգստյան /շաբաթ, կիրակի/ օրերով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Բերքառատի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. հոկտեմբերի 22-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Բերքառատի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Ծաղկահովիտ համայնք, Բերքառատ բնակավայր, 5-րդ փողոց, շենք՝ 1:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝ Էդգար Մելիքյանին, հեռախոս՝ 077-82-84-88: